



**Նվիրվում է Արմեն Գուլակյանի
ծննդյան 115 ամյակին**

**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИИ
ИНСТИТУТ ИСКУССТВ**

**NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARTS**

ГОР ВАНЯН

**ТВОРЧЕСКАЯ ЖИЗНЬ И
ИСКУССТВО АРМЕНА
ГУЛАКЯНА**

GOR VANYAN

**ARMEN GULAKYAN'S
CREATIVE LIFE AND ART**

**ЕРЕВАН, ИЗДАТЕЛЬСТВО АРМАВ
EREVAN, PUBLISHING HOUSE ARMAV
2014**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳՈՌ ՎԱՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ԳՈՒԼԱԿՅԱՆԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ
ԵՎ ԱՐՎԵՍՏԸ

ԵՐԵՎԱՆ



ԱՐՄԱՎ 2014

ՀՏԳ 792.071
ԳՄԳ 85.33
Վ 226

Հրատարակվել է պետական պատվերով

Հրատարակվել է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ **ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՎԱՆՑԱՆ ԳՈՌ

Վ 226 Արմեն Գուլակյանի ստեղծագործական կյանքը և արվեստը /
Գ. Վանյան. - Եր.: Արմավ, 2014.- 240 էջ:

Հեղինակն ընթերցողին է ներկայացնում 20-րդ դարի Հայ անվանի ռեժիսոր Արմեն Գուլակյանի (1899-1960) ստեղծագործական կյանքը և արվեստը: Սույն գիտական ուսումնասիրությունն մեջ, ժամանակի թատերական քննադատության էջերից ու հուշագրություններից բացի, քննությունն են առնված բազմաթիվ արխիվային նյութեր՝ անտիպ գրառումներ, ռեժիսորական օրինակներ, նամակներ, լուսանկարներ, թատրոնական փաստաթղթեր, որոնց հիման վրա հետազոտողը նոր լույսի տակ է դիտում Արմեն Գուլակյանի ստեղծագործական ուղին, բացահայտում նրա ռեժիսորական ոճն ու արվեստի առանձնահատկությունները:

Հասցեագրված է բեմադրիչներին, դերասաններին, թատերագետներին, թատրոնի պատմությանը հետաքրքրվող և ընթերցասեր լայն շրջաններին:

ՀՏԳ 792.071
ԳՄԳ 85.33

ISBN 978-9939-9107-5-8

© Վանյան Գոր, 2014
© Արմավ, 2014

Շապիկի նկարը՝ © Մ. Սարյանի ընտանիք

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Արմեն Գուլակյանը 20-րդ դարի Հայ թատրոնի նշանավոր բեմադրիչներից է: Նա իր ողջ ստեղծագործական կյանքը նվիրել է ազգային բեմարվեստի զարգացման գործին. ռեժիսոր, թատերագիր, թատերական մանկավարժ, թատրոնական գործի կազմակերպիչ, մեծ կամքի, զգոն մտքի և ուժեղ բնավորության տեր անհատականություն: Նա մեծապես նպաստել է Հայ թե՛ դրամատիկական և թե՛ օպերային թատրոնների զարգացմանը: Շուրջ երկու տասնամյակ՝ 1930-50-ական թվականներին Գուլակյանը Հայ բեմի առաջատարն է եղել, Սունդուկյանի անվան թատրոնի ստեղծագործական նկարագիրն ու ուղղվածությունը որոշող բեմադրիչը: Հայ թատրոնում անցյալ դարի առաջին կեսի ամենահայտնի բեմադրությունները՝ Գ. Սունդուկյանի «Խաթաբալան», «Պեպոն», Ա. Օստրովսկու «Ամպրոպը», Վ. Շքսպիրի «Օթելլոն», Մ. Լերմոնտովի «Դիմակահանդեսը», Լ. Տոլստոյի «Կենդանի դիակը», Ալ. Շիրվանզադեի «Պատվի համարը» նրա ստեղծագործություններն են: Նույնը կարելի է ասել ռեժիսորի օպերային թատրոնում արված բեմադրությունների մասին՝ «Անուշ», «Կարմեն», «Օթելլո», «Հուզենոտներ», «Արչակ երկրորդ», «Դավիթ բեկ», «Փառուստ»:

Գուլակյանի մասին անցյալում շատ է գրվել, ավելի շատ, քան այդ չըջանում ստեղծագործող որևէ այլ Հայ բեմադրիչի: Նկատի ունենք թե՛ նրա կենդանության օրոք հրապարակված թատերախոսականները և թե՛ մահից հետո լույս տեսած՝ տարբեր ժողովածուներում, նրա ժամանակակիցների հուշերն ու կենսագրական բնույթի հոդվածները: Ծավալուն

աշխատանք են կատարել Բարկեն Հարուժյունյանը և Բախտիար Հովակիմյանը: Ռեժիսորի մահից չորս տարի անց՝ 1964-թվականին Բարկեն Հարուժյունյանը հրապարակել է «Արմեն Գուլակյան» վերնագրով մի փոքրիկ գրքույկ, կազմել Գուլակյանի թատերական գործունեության տարեգրութիւնը, բեմադրութիւնների ցանկը: Հեղինակը համառոտ անդրադարձել է ռեժիսորի կենսագրութիւնը, նշել, որ թատրոններում է աշխատել, ինչ բեմադրութիւններ իրականացրել: Բարկեն Հարուժյունյանը կոչ է անում մանրամասն ուսումնասիրել Գուլակյանի արվեստը, և գիրքն ավարտում է հետևյալ տողերով. «Ականավոր արվեստագետի ստեղծագործական հարուստ ժառանգութիւնն արժանի է խոր և բազմակողմանի ուսումնասիրութիւն»¹:

Եղիշե Չարենցի անվան գրականութիւնի և արվեստի թանգարանում Արմեն Գուլակյանին վերաբերող 2700 փաստաթուղթ կա: Գուլակյանի շատ ռեժիսորական օրինակներ պահպանվել են: Կան նրա պիեսները, լիբրետոները, ներկայացումներից լուսանկարներ, ռեժիսորական գրառումներ, թատրոնական փաստաթղթեր, նամակներ: Ռեժիսորի այդ ծավալուն արխիվը մշակել է Բախտիար Հովակիմյանը:

«Հայ սովետական թատրոնի պատմութիւն»² (1967) գրքում Արմեն Գուլակյանի մասին է գրել Սաբիր Ռիզաևը: Նա համառոտ անդրադարձել է ռեժիսորի ստեղծագործական կյանքին, նշել է, թե ինչ գաղափարներ էին հետապնդում Գուլակյանի բեմադրութիւնները, մամուլից մեջբերումներ արել: Ռիզաևը մասնագիտորեն հետաքրքիր և մանրամասն է նկարագրել, հատկապես, «Անուշ» և «Դիմակահանդես» բեմադրութիւնները:

Իրենց ժողովածուներում Արմեն Գուլակյանի մասին հուշեր են պատմում Դավիթ Մայլանը («Դեմքեր, հանդիպումներ»³ գրքում) և Ռուբեն Չարյանը («Հուշապատում»⁴ գիրք երկրորդ):

Արմեն Գուլակյանի թատերական մանկավարժութիւն

է անդրադարձել Հենրիկ Հովհաննիսյանն իր «Թատրոն. հին և նոր արժեքներ»⁶, «Թատրոն և թատերախոսություն»⁶ գրքերում: Հեղինակը մասնագիտորեն մանրամասն ներկայացրել է, թե ուժիսորն ինչ էր սովորեցնում ուսանողներին, պիեսն ինչպես էր բեմադրում նրանց հետ, և ինչու էր նրա ուսումնական մեթոդն այդքան արդյունավետ:

1979 թվականին Հայկական թատերական ընկերությունը հրապարակել է «Արմեն Գուլակյան»⁷ ժողովածուն: Գրքում անվանի արվեստագետներ, գործընկերներ, թատերական գործիչներ, նրա ուսանողները ուժիսորի մասին իրենց հուշերն են պատմում: «Արչակ երկրորդ» օպերայի համար գրված Արմեն Գուլակյանի լիբրետոյին է անդրադարձել իր «Արչակ Բ». Հայոց անդրանիկ օպերան»⁸ և «Տիգրան Չուխաճյանի երաժշտական թատրոնը»⁹ գրքերում Աննա Ասատրյանը:

Գուլակյանի բեմական-հասարակական գործունեություն մեջ չեն եղել վայրիվերումներ, սկզբունքի պակաս, անհարկի հակասություններ: Սակայն քիչ չեն նրա մասին ձևավորված հակասական կարծիքները: Շատերը Գուլակյանին համարում են 20-րդ դարի Հայ թատրոնի ամենապրոֆեսիոնալ ուժիսորը, ոմանք էլ այն կարծիքին են, որ նա ուղղակի զբաղված է եղել խորհրդային գաղափարախոսության պրոպագանդայով: Ռեժիսորի շատ բեմադրություններ տարբեր մեկնաբանությունների առիթ են տվել և չբացահայտված շերտեր են ենթադրում: Հայտնի է, թատրոնում օրվա պահանջով ստեղծված գրական նյութը հնացման ենթակա է: Սոսկ գաղափարական կամ բարոյա-դաստիարակչական նպատակով գրված բազում «խորհրդային հեղինակների» պիեսներ գրականություն պատմության մեջ չեն ին տեղ ունեն կամ չըջանցված են: Ուստի համարել, որ Սունդուկյանի անվան թատրոնում Գուլակյանի ծառայությունը մեծ էր հատկապես գաղափարական-ծրագրային նշանակություն ունեցող պիեսները բեմադրելու գործում, նշանակում է ոչինչ չա-

սել նրա մասին, կամ միտումնավոր կերպով շրջանցել ռեժիսորի գործունեութիւնը:

Շատ հեղինակներ էլ, Գուլակյանին անդրադառնալով, արվեստից խոսելու փոխարեն, թվում են նրա կամային հատկանիշները՝ «աշխատասեր էր», «սկզբունքային», «ճշտապահ», «խստաբարո», «հետևողական», խոսքեր, որոնք ստեղծագործական կարգապահութիւնն են վերաբերում և ոչ թե ռեժիսորական մեթոդին: Նրա բեմադրական սկզբունքների մասին ակնարկներ կան միայն: Գուլակյանի ժամանակակիցների հուշերը հաճախ հետազոտողին ավելի շատ նյութ են ընձեռում, քան մամուլում հրապարակված շատ հոդվածներ: Թատերախոսականներում հազվադեպ ենք տեսնում տեսարանների նկարագրութիւններ: Հեղինակները քիչ դեպքերում են մոտենում բեմական արվեստին ու բեմադրական խնդիրներին: Հաճախ բեմական վիճակների մասին պատկերացում ենք կազմում ներկայացումների լուսանկարներից: Գուլակյանի բեմադրական սկզբունքները տեսնում ենք նրա ռեժիսորական գրառումներում և առաջնորդվում այդ նշումներով:

«Ձեռն հավատում Սիրանույշի մեծութեանը և չեմ հավատա, եթե ասելու են՝ «Նա հրդեհվում էր բեմում և այրվում անմնացորդ»: Էսպես կխոսե՞ն,- ասել է Գուլակյանը: - Թող ասեն՝ ինչ էր անում»¹⁰: Մեր խնդիրն է եղել պարզել, թե ինչպես էր աշխատում Գուլակյանը՝ «Ինչ էր անում»: Ինչպիսի՞ն էր նրա ռեժիսուրան: Ինչո՞վ էր նա տարբերվում, առանձնանում իր ժամանակի հայ մյուս ռեժիսորներից: Այս հարցերը հիմնավորապես ուսումնասիրված չեն: Այսօր քիչ է հիշատակվում Գուլակյանի անունը, և մեր ժամանակակիցներին շատ բան հայտնի չէ նրա մասին: Մինչդեռ, Գուլակյանի բեմադրական սկզբունքների ուսումնասիրութիւնն ու իմացութիւնը գործնականում ամենից առավել մեր ռեժիսորներին է հարկավոր:

Այժմ, երբ փլուզվել է Խորհրդային Հասարակարգը, երբ արվեստագետի միտքն ազատ է գաղափարական հարկադ-

րանքներից, ինչպես Արմեն Գուլակյանի ստեղծագործական կյանքն, այնպես էլ՝ անցյալ դարի հայ թատրոնի պատմությունն շատ էջեր, նոր ուսումնասիրություն են պահանջում:

Սույն աշխատության նպատակն Արմեն Գուլակյանի ստեղծագործական կյանքի և արվեստի ուսումնասիրումն է: Սակայն հարցի էությունը հետևյալն է. ոչ թե ո՞վ էր Գուլակյանը և ի՞նչ բեմադրեց, (այդ մասին բավականին գրականություն կա) այլ ինչպե՞ս է ռեժիսորը ստեղծագործել, պատմական ի՞նչ ժամանակաշրջանում և թատերական ի՞նչ համատեքստում է իրականացել նրա արվեստը:

Ձրջանցելով և չհակադրվելով մեզ նախորդող հեղինակներին, գնահատելով նրանց ձեռքբերումները, փորձել ենք շարունակել, զարգացնել ասվածը, լրացնել առկա բացթողումները, նաև հիմնավորել նոր տեսակետներ՝ ոչ թե հայտարարությամբ, այլ փաստերի տրամաբանությունից և հետազոտության արդյունքներից ելնելով: Հայտնի կարծիքներն ու թատերախոսականները համեմատելուց բացի, ուսումնասիրել ենք Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահպանվող անտիպ նյութեր, ռեժիսորական օրինակներ, Գուլակյանի ձեռագրերը, թատրոնական փաստաթղթեր, հրամանագրեր, նաև նրա ժամանակակիցների ձեռագրերը, բեմադրությունների քննարկումներից մնացած արձանագրություններ, լուսանկարներ, նամակներ: Հետազոտության համար աղբյուր են հանդիսացել ռեժիսորի մասին գրված այն ամենը, ինչին հնարավորություն ենք ունեցել ծանոթանալ:

Գրավոր փաստերին հավատարիմ մնալով, աշխատելով առաջ չընկնել ժամանակակիցներից, այնուամենայնիվ նկատում ենք, որ ինչ-ինչ տվյալներ դուրս են մնացել Գուլակյանի կենսագիրների ուշադրությունից: Ուստի, չրջանառության մեջ ենք դրել ռեժիսորի մասին պատմող՝ մինչ օրս անհայտ արխիվային նյութեր: Գուլակյանի ստեղծագործական կյանքին վերաբերող փաստերն աշխատել ենք ճշտել, ի մի ենք բե-

րել և ավելացրել կենսագրական նոր տվյալներ, զուգահեռաբար բացահայտել նրա ռեժիսուրայի բնույթն ու բեմական արվեստի մասին տեսակետները:

Անդրադառնալով ռեժիսորի վաղ շրջանի ստեղծագործություններին, հեղինակները չեն նշում, թե պատմա-քաղաքական ինչ պայմաններում են իրականացել նրա բեմադրությունները: Ուսումնասիրություն ժամանակ այս հարցը նույնպես եղել է մեր ուշադրության կենտրոնում: Փորձել ենք պարզել, թե ինչպիսին էր Գուլակյանի ստեղծագործական նկարագիրը ռեժիսորական գործունեության վաղ շրջանում (հետհեղափոխական առաջին տասնամյակում), ինչպիսին՝ 1935-40-ական թվականներից հետո:

Անհրաժեշտ ենք համարել հետազոտել, թե ովքեր էին հայ թատրոնում Գուլակյանի նախորդները, և ավանդների հերթափոխության առումով ի՞նչ էր ժառանգել բեմադրիչը նրանցից:

Աշխատության գլխավոր խնդիրներից է Արմեն Գուլակյանի բեմադրական սկզբունքների ուսումնասիրությունը: Ինչպիսի՞ն էր նրա ռեժիսուրան: Ինչպե՞ս է Գուլակյանն աշխատել դերասանների հետ, ինչպե՞ս մշակել բեմական գործողության պարտիտուրը:

Արմեն Գուլակյանի ռեժիսորական արվեստի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ ենք համարել քննել, թե նա ինչպես է բեմադրել դասական հեղինակների ստեղծագործությունները:

Մեր խնդիրն է եղել ուսումնասիրել Արմեն Գուլակյանի բեմադրական սկզբունքներն Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում: Անհրաժեշտ ենք համարել պարզել, թե ռեժիսորն, ի տարբերություն դրամատիկական թատրոնի դերասանների, ինչպես է աշխատել օպերային թատրոնում երգիչ-դերասանների հետ:

«Արմեն Գուլակյանը որպես թատերական գործիչ և մանկավարժ» խորագրի ներքո ուսումնասիրել ենք, թե Գու-

լակյանը ինչպե՞ս էր ղեկավարում թատերական կոլեկտիվը, ինչպիսի՞ խաղացանկային քաղաքականություն վարում, ինչպե՞ս էր կարողանում կարգավորել թատրոնի առաջ ծառայած տնտեսական և ֆինանսական խնդիրները: Ցավոք, մինչ օրս չի ուսումնասիրվել և չեն անդրադարձել այն փաստին, թե ի՞նչն էր պատճառը, որ 1953 թվականին Գուլակյանը (ու՜մ ղեկավարություն տարիներին Սունդուկյանի անվան պետական թատրոնը բարձրացել էր ակադեմիական թատրոնի մակարդակի), առանց որևէ լուրջ հիմնավորման, ազատվեց աշխատանքից: Այս հարցը նույնպես եղել է մեր ուշադրության կենտրոնում:

Արմեն Գուլակյանի մանկավարժական գործունեությունն ուսումնասիրելու գործում, բարձր գնահատելով Հենրիկ Հովհաննիսյանի աշխատանքը և հիմք ընդունելով նրա դատողությունները, ոչ թե առաջ ենք քաշել նոր տեսակետներ, այլ փորձել ենք լրացնել և ընդարձակել ասվածը՝ քննել ենք Գուլակյանի այն գրառումները, որտեղ նա նշում է, թե ինչ է պատրաստվում խոսել աշակերտների հետ, ուսումնասիրել ենք ժամանակակիցների և ուսանողների գրավոր հուշերը, ռեժիսորի արխիվից դուրս ենք բերել և հրապարակել նրա մանկավարժական գործունեության մասին պատմող անտիպ նյութեր:

Հետազոտության նպատակն է եղել ամբողջական և հնարավորինս անաչառ ներկայացնել Արմեն Գուլակյանի ռեժիսորական նկարագիրը, հստակել հայ թատրոնի պատմության մեջ նրա տեղն ու դերը, բացահայտել մարդկային խառնվածքը, ստեղծագործական սկզբունքները, նրա ռեժիսորական ոճն ու արվեստի առանձնահատկությունները:

ՎԱՂ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նդիչե Չարենցի անվան գրականությունների և արվեստի թանգարանում Արմեն Գուլակյանին վերաբերող տարբեր փաստաթղթերի հետ պահպանվել է նաև նրա կենսագրականը: «Ծնվել եմ 1899 թվին Թբիլիսիում, արհեստավորի ընտանիքում: Հայրս (Կարապետը - Գ. Վ.) ծնվել է Իջևանի Խաչթառակ գյուղում, 1868 թվին, հետագայում տեղափոխվել է Թբիլիսի: Կոչկակար էր: Մինչև հեղափոխությունը որպես բանվոր աշխատել է Թբիլիսիի մասնավոր գործարանատերերի մոտ, 1921 թվից աշխատել բանվորական արտելներում»¹: Պատանի Արամը (Գուլակյանի անունը Արամ էր: Օվի Սևույանն է բեմին նվիրվելու առթիվ Գուլակյանին տվել Արմեն անունը²) նախնական կրթությունը ստացել է քաղաքային տարրական դպրոցում, իսկ միջնակարգ կրթությունը՝ Թիֆլիսի Հայոց Ներսիսյան դպրոցում:

Արմեն Գուլակյանը Ներսիսյան դպրոց է ընդունվել 1912 թվականին: Սրամիտ էր, ուշիմ, բայց առաջադիմություններ աչքի չէր ընկնում: Միակ առարկան, որից մշտապես գերազանց գնահատական էր ստանում, աշխարհագրությունն էր³: Պահպանվել է Գուլակյանի դպրոցական լուսանկարը. մազերը կարճ կտրված, ինքը՝ կարճահասակ, կլոր դեմքի վրա հոնքերը հազիվ են նշմարվում, վերնաշապիկն ու անդրավարտիքը սև մահուղից են, գոտին ճարմանդով՝ վրան փորագրված ՆԱԳ (Ներսիսյան ազգային դպրոց): Առարկաների հանդեպ ունեցած նախասիրություններից անկախ՝ Արամը դպրոցի ամենակարգապահ ու կազմակերպված աշակերտներից է

եղել: «Արդեն պատանեկան հասակից Գուլակյանի մեջ ի հայտ եկած ներքին կարգապահություն, պարտաճանաչություն ու պահանջկոտության զգացումը հետագայում նրա գործունեության անբաժան ուղեկիցը դարձավ»⁴, - գրում է Բաբկեն Հարությունյանը: Ներսիսյան դպրոցում լույս էին տեսնում աշակերտական ձեռագիր թերթեր, ժողովածուներ՝ «Կայծ», «Արտիստ», «Ցավոտ ծիծաղներ»: Ժողովածուներից մեկը, որն անվանել էին «Հանաքչի», խմբագրել է Գուլակյանը: «Նա խմբագրական աշխատանքն էր կատարում, ես՝ նկարչական ձևավորումը: Երկուսով էինք գրում բոլոր նյութերը: Այդ ժողովածուն դպրոցում ձեռքից ձեռք էր անցնում, և աշակերտները մեծ սիրով ու հետաքրքրությամբ էին կարդում»⁵, - հիշում է Մարտին Մազմանյանը: Գպրոցում Գուլակյանը նաև աշակերտական ներկայացումներ է կազմակերպել: «Թատրոնով հետաքրքրվել եմ աշակերտական նստարանից: Սկսած 1912 թվից մինչև 1920 թիվը՝ կազմակերպել, ղեկավարել և մասնակցել եմ զանազան աշակերտական դրամատիկ խմբերում»⁶, - գրում է նա:

Գուլակյանը Ներսիսյան դպրոցում ուսումն ավարտել է 1920-21թթ. ուսումնական տարում: Նա Սևուճյանի դրամատիկական ստուդիա է ընդունվել, երբ դեռ Ներսիսյան դպրոցի աշակերտ էր: 1917 թվականի աշնանը Օվի Սևուճյանը Թիֆլիսում կազմակերպել է դրամատիկական ստուդիա, որտեղ չատերի հետ ուսանելու է եկել նաև Գուլակյանը:

Օվի Սևուճյանը 1910-1911 և 1912-1913 թվականներին եղել էր Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի ստաժոր, ծանոթացել մոսկովյան թատերական կյանքին: ՄՆԱՏ-ի Առաջին ստուդիան նոր էր բացվել: Սա այն շրջանն է, երբ Ստանիսլավսկին առաջին գրույցներն էր վարում իր «սիստեմի» շուրջ: Ստուդիայում էր նաև Վախտանգովը: Սևուճյանը աշխատել էր Գևորգ Բուրջայանի հետ, հետևել Նեմիրովիչ-Գանչենկոյի և Լուժսկու փորձերին: Նրա մասնագիտական նկարագիրը ձևավորվել էր Գեղարվեստական թատրոնի

սկզբունքների հիման վրա: Երբ Գուլակյանը Թիֆլիսի դրամատիկական ստուդիայում էր սովորում, առանձին գրքույկով արդեն լույս էր տեսել «Հայ թատրոնի ցանկալի բարեփոխումներից անհրաժեշտագույնների մասին» Սևուձյանի գեկույցը: Մոսկվայից վերադառնալով Թիֆլիս՝ 1913 թվականի հունիսի 1-ին, Հայոց դրամատիկական առաջին ընդհանուր ժողովում Օվի Սևուձյանն առաջարկում է բարեփոխել Հայ թատերական մշակույթը: Նա իր գեկույցում խոսել է խաղացանկի, ռեժիսուրայի, դրամատիկական ստուդիա և թատերախումբ կազմելու նոր սկզբունքների մասին: Բարեփոխումների ծրագրի իրականացումը նախ պետք էր սկսել ստուդիայից: «Ես կարծում եմ ամենանպատակահարմար միջոցն այն կլինի, որ Դրամատիկական ընկերությունն ունենա իր դրամատիկական ստուդիա-արվեստանոցը: Ահա այդ ստուդիայում թե՛ խմբի սկսնակ դերասանները, թե՛ աշխատակից անդամները, իրենց բեմին նվիրել ցանկացողները, բեմի ուսուցչի՝ ստուդիայի ռեժիսորի ղեկավարությունը վարժվելու են դրամատիկական բեմական արվեստի մեջ»⁷: Զեկույցում Սևուձյանն էական նշանակություն է տալիս գեղարվեստական անսամբլին, պահանջում, որ թատրոնը պետք է՛ դարձնել որոշ դերասանների քմահաճույքի առարկա: Սևուձյանը ռեժիսորին համարում է միջնորդ դերասանի և դրամատուրգի միջև, որը պետք է թատրոնի էությունը կազմող բոլոր առանձին բաղադրատարրերը հավաքի, հարթի և ներդաշնակի: Նա գտնում է, որ ժամանակակից մարդը, առավել ևս դերասանը, շատ է նրբացել և չի կարելի միևնույն ձևով ցուցմունքներ տալ բոլոր դերասաններին. «Ռեժիսորը պիտի լինի այնքան խորը հոգեբան, որ կարողանա ամենանուրբ կերպով ուսումնասիրել յուրաքանչյուր դերասանի գլխավոր երակը: ...Դերասանին անհրաժեշտ է յուր անհատական, բնական ձիրքերի ազատ զարգացումն՝ ազատ որոնման պայմաններով շրջապատված: Դերասանն ինքը պիտի աշխատի իր վրա և անպայման ազատ»⁸:

Օվի Սևուճյանը Թիֆլիսում կարողացել է դրամատիկական ստուդիա կազմակերպել զեկույցից չորս տարի հետո միայն: Ստուդիայում Սևուճյանից բացի դասավանդել են նաև Լևոն Քալանթարը, Սրբուհի Լիսիցյանը, Ռուբեն Մամուլյանը, Մաթևոս Սանամյանը:

Սևուճյանը հեշտությամբ է մտերմացել մարդկանց հետ, ունեցել է խոսելու այնպիսի եղանակ, որ կաշառել է լսողին: Նրան հավատացել են, ոգևորվել: Հետագայում Գուլակյանը պատմել է, որ առաջին անգամ նա է իր մեջ հետաքրքրություն առաջացրել ռեժիսորական արվեստի հանդեպ: «Արմեն Գուլակյանը հատկապես սիրով էր հիշում այն խոշոր դերը, որ նրա առաջին ուսուցիչ Օվի Սևուճյանը կատարել էր իր ստեղծագործական կյանքում՝ մղելով իրեն ռեժիսորական արվեստի բարդ ու պատասխանատու ասպարեզը»⁹, - գրում է Բարկեն Հարությունյանը:

Գուլակյանը հիացմունքով է խոսել Սևուճյանի ռեժիսորական վարպետության մասին, հիշել է, թե ռեժիսորն ինչպես էր բեմադրում զանգվածային տեսարանները: «...մեծ սիրով ու ոգևորությունմբ սկսեց աշխատել Շարլ Մերիի «Հիդրա» պիեսի բեմադրության վրա, - պատմել է Գուլակյանը: - Ամբողջ մեկ ամիս Օվի Սևուճյանն աշխատում էր մասսայական տեսարանների վրա, մշակում ամենափոքր հատվածը: «Հիդրայի» բեմադրությունը փայլուն անսամբլի ներկայացում էր, որի միջից կարծես մի մրրկաբեր քամի սրբել, մաքրել էր անհատապաշտական թատրոնի կեղտն ու շտամպը: Մասսայական տեսարանների նման մշակում ես տեսել եմ մեկ էլ ռեժիսոր Արչակ Բուրջալյանի մոտ»¹⁰:

Սևուճյանն առաջին փորձին թատրոն է եկել արդեն պատրաստված, միզանսցենները նախապես մտածած ու մշակած: Նախքան առաջին փորձը սկսելը նա ներկայացման մասնակիցների համար կարդացել է պիեսը, բացատրել հեղինակի մտահղացումը, նպատակը, յուրաքանչյուր հերոսի ով լինելը և ապա հայտնել իր մոտեցումը պիեսին, թե ինչ ձևով

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ	
Վաղ կենսագրությունը	12
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԳ	
Ռեժիսորական գործունեությունից սկիզբը Երևանի Առաջին պետական թատրոնում	27
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԳ	
Դասական հեղինակների երկերն Արմեն Գուլակյանի բեմադրություններ (1940-55 թթ.)	71
ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԳ	
Ռեժիսորական հայացքները	120
ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԳ	
Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում	143
ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԳ	
Թատերական գործիչն ու մանկավարժը	164

ԱՄՓՈՓՈՒՄ	190
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	193
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	212
ԱՆՎԱՆԱՅԱՆԿ	220
<i>PEZIOME</i>	230
<i>SUMMARY</i>	233

ԳՈՌ ԿԱՄՍԱՐԻ ՎԱՆՅԱՆ

**ԱՐՄԵՆ ԳՈՒԼԱԿՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ
ԵՎ ԱՐՎԵՍՏԸ**

ВАНЯН ГОР КАМСАРОВИЧ

*ТВОРЧЕСКАЯ ЖИЗНЬ И ИСКУССТВО АРМЕНА
ГУЛАКЯНА*

GOR KAMSAR VANYAN

ARMEN GULAKYAN'S CREATIVE LIFE AND ART

*Խմբագիր՝ Հենրիկ Հովհաննիսյան
Հրատարակչական խմբագիր՝ Արմեն Ավանեսյան
Սրբագրիչ՝ Նահրա Շահվալադյան
Ձևավորումը՝ Արմինե Քոչարյանի
Շապիկի նկարը՝ Մարտիրոս Սարյանի
Լուսանկարը՝ Սոնա Բարսեղյանի*

*Չափսը՝ 60x84 1/16:
Թուղթը՝ օֆսեթ 70գ/մՔ 1.8 ծ. խ.:
Ծավալը՝ 15 փպ. մամուլ:
Տպաքանակը՝ 400:
Գինը պայմանագրային:
Տպագրարտունը՝ «Անդարես»
Հասցե՝ ք. Երևան, 0039,
Բազրատունյաց փող. 2-րդ նրբ 23 շենք:*



«ԱՐՄԱՎ» հրատարակչություն

АРМАВ ИЗДАТЕЛЬСТВО

Ք. Երևան, 16 ք. 18 / 94
հեռ.՝ 34-73-35
Էլ.փոստ՝ armav-hrat@mail.ru

Գ. Երևան, 16 կվ. 18 / 94
տեղ.՝ +374-10-34-73-35
Email: armav-hrat@mail.ru